ԿԱՐԾԻՔ

ՀՐԱՆՏ ԱՐՄԵՆԻ ՍԱՐԿԻՍՈՎԻ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԺԲ.00.02.- «ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ազգային անվտանգության ապահովման սահմանադրաիրավական և ինստիտուցիոնալ կառուցակարգերի ուսումնասիրությունը ժամանակակից սահմանադրական իրավունքի և պետական կառավարման տեսության առանցքային ուղղություններից է: Ազգային անվտանգության ոլորտում որոշումների ընդունման, պետական մարմինների գործունեության համակարգման, անվտանգության քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունների ձևավորման և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այդ ոլորտում գործող սահմանադրական մարմինների իրավական կարգավիճակի հստակությամբ, լիազորությունների սահմանների կանխատեսելիությամբ և պետական իշխանության մյուս մարմինների հետ փոխհարաբերությունների պատշաճ կարգավորմամբ:

Այս առումով առանձնահատուկ կարևորություն ունի Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի ուսումնասիրությունը: Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգի՝ խորհրդարանական մոդելի անցման պայմաններում Անվտանգության խորհուրդը ձեռք է բերել նոր սահմանադրական նշանակություն: Այն այլևս չի կարող դիտարկվել բացառապես որպես գործադիր իշխանության ղեկավարին կից խորհրդակցական կամ օժանդակ մարմին: Գործող սահմանադրական կարգավորման պայմաններում Անվտանգության խորհուրդը սահմանադրորեն ամրագրված, ազգային անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանմանը մասնակցող և պաշտպանության ոլորտին

վերաբերող կարևորագույն հարցեր քննարկող մարմին է, որի գործունեությունն ուղղակիորեն առնչվում է պետության ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը, պաշտպանունակությանը և պետական իշխանության սահմանադրական շարունակականության ապահովմանը:

Գիտական նորույթի գնահատականը

Ատենախոսության շրջանակներում առաջադրված և որպես գիտական նորույթ առանձնացված դրույթներից հատկապես կարևոր և արժեքավոր ենք համարում հետևյալները.

Նախ, Հեղինակը հայրենական սահմանադրաիրավական գիտության մեջ փորձ է կատարել ձևակերպելու «Անվտանգության խորհուրդ» հասկացության յուրատեսակ գիտական սահմանումը՝ այն դիտարկելով ոչ միայն որպես սահմանադրորեն նախատեսված կոլեգիալ մարմին, այլև որպես ազգային անվտանգության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների ձևավորմանը մասնակցող, պետական իշխանության մարմինների գործունեության համակարգմանն աջակցող և իր իրավասության շրջանակներում որոշումներ ընդունող սահմանադրաիրավական ու իրավաքաղաքական ինստիտուտ:

Առաջարկված սահմանումը գիտական արժեք ունի այն առումով, որ արտացոլում է Անվտանգության խորհրդի երկակի բնույթը: Մի կողմից՝ այն սահմանադրաիրավական ինստիտուտ է, քանի որ դրա կազմավորման հիմքերը, նախագահող սուբյեկտը և գործունեության ընդհանուր ուղղությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Մյուս կողմից՝ այն ունի ընդգծված իրավաքաղաքական բնույթ, քանի որ դրա գործունեությունը կապված է ազգային անվտանգության ոլորտի ռազմավարական առաջնահերթությունների, քաղաքական որոշումների և պետական մարմինների համաձայնեցված գործունեության հետ:

Առանձին կարևորություն ունի Անվտանգության խորհրդի կազմի վերաբերյալ Հեղինակի առաջարկած դասակարգումը, որի համաձայն՝ նպատակահարմար է տարանջատել Անվտանգության խորհրդի հիմնական կամ մշտական անդամներին և այլ անդամներին: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս մի կողմից պահպանել

մարմնի գործունեության ինստիտուցիոնալ շարունակականությունը, իսկ մյուս կողմից ապահովել համապատասխան օրակարգային հարցերի քննարկմանը այն պաշտոնատար անձանց մասնակցությունը, որոնց լիազորությունները անմիջականորեն առնչվում են քննարկվող ոլորտին:

Գիտական նորույթի առումով կարևոր է նաև ազգային անվտանգության բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Անվտանգության խորհրդի կողմից եզրակացություն ներկայացնելու անհրաժեշտության հիմնավորումը: Հեղինակը փաստարկում է, որ ազգային անվտանգության ռազմավարական բնույթի փաստաթղթերի և ոլորտային օրենսդրական նախաձեռնությունների միջև հակասությունները բացառելու համար անհրաժեշտ է նախատեսել նախնական ինստիտուցիոնալ գնահատման կառուցակարգ:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, որոնց վերաբերյալ ստորև ներկայացնում ենք մեր նկատառումները:

1. Ատենախոսությունում Հեղինակը, առաջարկելով Անվտանգության խորհրդի կազմը տարբերակել հիմնական և այլ անդամների, միաժամանակ հիմնավորում է այնպիսի կառուցակարգի ներդրման անհրաժեշտությունը, որի համաձայն՝ հիմնական անդամների ձայների երկու երրորդով Անվտանգության խորհրդի կոնկրետ նիստի օրակարգային հարցի քննարկմանը կարող է ներգրավվել համապատասխան պետական մարմնի ներկայացուցիչ՝ տվյալ հարցի շրջանակում նրան Անվտանգության խորհրդի անդամի կարգավիճակ վերապահելով: Միևնույն ժամանակ, պարզ չէ՝ այդ անձը պետք է օգտվի միայն նիստին մասնակցելու և մասնագիտական դիրքորոշում ներկայացնելու իրավունքից, թե նաև՝ մասնակցի որոշման նախագծի ձևավորմանը, ունենա քվեարկության իրավունք, հաշվարկվի որոշումների ընդունման համար անհրաժեշտ քվորումի և ձայների հարաբերակցության որոշման ժամանակ, կրի Անվտանգության խորհրդի անդամների համար նախատեսված իրավական և քաղաքական պատասխանատվությունը, պահպանի անդամի կարգավիճակից բխող պարտականությունները նաև նիստի ավարտից հետո:

2. Ատենախոսության երրորդ գլխի առաջին ենթագլխում Հեղինակը հիմնավորված կերպով արձանագրում է, որ գործող իրավակարգավորումներով բավարար հստակությամբ որոշված չեն Անվտանգության խորհրդի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող սուբյեկտը, վերահսկողության ընթացակարգը և որոշումների չկատարման իրավական հետևանքները: Աշխատանքում առաջարկվում է Անվտանգության խորհրդի քարտուղարին վերապահել որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության և մշտադիտարկման գործառույթներ՝ օրենսդրորեն հստակեցնելով վերջինիս համապատասխան լիազորությունները:

Մեր կարծիքով, այս առաջարկը հավելյալ պարզաբանման կարիք ունի, քանզի ի վերջո հետազոտությունից չի երևում, Անվտանգության խորհրդի քարտուղարը պետք է ունենա միայն որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, ներկայացված տեղեկատվությունն ամփոփելու, կատարման վիճակը գնահատելու և զեկուցելու լիազորությունն՞ր, թե՞ նաև՝ պետական մարմիններին պարտադիր հանձնարարականներ տալու, որոշումների չկատարման փաստ արձանագրելու, խախտումների վերացման պահանջ ներկայացնելու, կամ պաշտոնատար անձանց պատասխանատվության հարց բարձրացնելու իրավասություն:

3. Ատենախոսությունում առաջարկում է Անվտանգության խորհրդի աշխատակարգը հաստատել Կառավարության որոշմամբ: Մեր կարծիքով, հիմնավոր պարզաբանման կարիք ունի այն հարցը, թե Կառավարությունն իրավասո՞ւ է իր որոշմամբ ամբողջական կարգավորման ենթարկել Սահմանադրությամբ նախատեսված առանձին կոլեգիալ մարմնի ներքին կազմակերպման և գործունեության կարգը: Թեև Անվտանգության խորհուրդը նախագահում է վարչապետը, այդ հանգամանքն ինքնին դեռևս չի նշանակում, որ խորհուրդը կազմակերպահրավական առումով նույնանում է Կառավարության կամ նրա ենթակա մարմնի հետ:

4. Այս համատեքստում աշխատանքն առավել ամբողջական կլիներ, եթե Հեղինակը տարբերակեր Անվտանգության խորհրդի գործունեության՝ օրենքով կարգավորման

ենթակա հիմնարար տարրերը, ենթաօրենսդրական կարգավորման ենթակա կազմակերպական հարցերը, ինչպես նաև խորհրդի ներքին գործունեությանը վերաբերող այն ընթացակարգերը, որոնք կարող են կարգավորվել հենց Անվտանգության խորհրդի կողմից ընդունվող ակտով:

Վերը ներկայացված նկատառումները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը. դրանք հիմնականում ունեն բանավեճային բնույթ, բխում են աշխատանքի շրջանակում առաջադրված գիտական նորույթի և առաջարկությունների նշանակությունից և կարող են հետագա գիտական հետազոտությունների առարկա դառնալ:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ մեր նկատառումները՝ գտնում ենք, որ ատենախոսության թեման արդիական է, և արդիականությունը հաջողությամբ հիմնավորվել է Հեղինակի կողմից: Ատենախոսությունը հանդիսանում է ինքնատիպ, գիտականորեն հիմնավորված և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն, որը լրացնում է հայրենական սահմանադրական իրավունքի գիտությունում Անվտանգության խորհրդի կարգավիճակի, կազմավորման, իրավասության, որոշումների իրավական բնույթի և պետական իշխանության մարմինների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ առկա գիտական բացը: Ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի գիտական ոճով, կառուցվածքային ամբողջականությամբ և հետազոտության առարկայի նկատմամբ համակարգային մոտեցմամբ: Աշխատանքը պատրաստված է ատենախոսություններին ներկայացվող բովանդակային և ձևական պահանջներին համապատասխան:

Ատենախոսության հիմնական դրույթները համարժեք ընդգրկմամբ և խորությամբ արտացոլված են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում հրատարակված Հեղինակի թվով 8 գիտական հոդվածներում:

Ամփոփելով վերը շարադրվածը, գտնում ենք, որ **Հրանտ Արմենի Սարկիսովի «Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները»** թեմայով ատենախոսությունը ավարտուն և համալիր հետազոտություն է, այն համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թ.

օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և ներկայացված աշխատանքի համար հեղինակն արժանի է ԺԲ.00.02- «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ի.գ.դ., ք.գ.թ., պրոֆեսոր

«15» հուլիսի 2026 թվական

Ի.Գ.Դ., Ք.Գ.Թ., ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Բ.Գ.Թ. ՌՈԶԱ ԿԱՍԱԲԱԲՈՎԱ
«16» հուլիսի 2026 թվական